ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» մարտի 2020 թվականի N 142-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արամ Աջաբխանյանի կողմից 2020 թվականի մարտի 4-ին տրված եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների արտաքին մակերեսների վերաբերյալ, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 24-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» թիվ 109-Ա որոշման կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում և որոշման 1-ին կետում «9,0 քառ.մետր» բառերը փոխարինել «130,2 քառ.մետր» բառերով,

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «1 161 836 (մեկ միլիոն հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր երեսունվեց)» բառերը փոխարինել «1 350 908 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար ինը հարյուր ութ)» բառերով:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Անդրանիկի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» մարտի 2020 թվականի N 143-Ա

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արթուր Սարգսի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/73 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10072019-07-0083 վկայականում նշված 17,93 քառ.մետր մակերեսով թիվ 1 ավտոտնակը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Սարգսի Ոսկանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» մարտի 2020 թվականի N 144-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 26-ի N 64-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Հաստատել՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,

2)տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,

3)առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

2.Մինչև 2020 թվականի մարտի 16-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել սույն որոշման 1-ին կետով հաստատված փաստաթղթերը:

3.Սույն որոշման կատարման հսկողությանը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 6
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2020 թվականի
մարտի 6-ի N 144-Ա որոշման

ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1	Ուսումնասիրել սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն	Համայնքի ղեկավարի տեղակալ	Մինչև 2020 թվականի մարտի 16-ը
2	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա սելավատարերի անհրաժեշտ հատվածները մաքրելու համար:		
3	Մաքրել համայնքի սելավատարերը: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 2020 թվականի մարտի 16-ը
4	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ	Անհրաժեշտության դեպքում, սկսած 2020 թվականի մարտի 16-ից
	2. Հիմնական միջոցառումներ		
5	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ	Մշտապես
6	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
7	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարհանման հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
8	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Համայքի ղեկավարի տեղակալ	Ըստ անհրաժեշտության

9	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավարի տեղակալ	Անհրաժեշտության դեպքում
10	Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև:	«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի Կոտայքի տարածքային կենտրոն	
11	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն:	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «Գեղամա» մասնաճյուղ «Ջրվեժի համայնքային տնտեսության» ՀՈԱԿ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2020 թվականի
մարտի 6-ի N 144-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ջրվեժ համայնքի հակահեղեղային կառույցների (Կառույցի) հաշվառման

Հ/հ	Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ)	Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ)	Կառույցի				Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ)	Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով	Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար)
			երկարությունը (մ)	լայնությունը (մ)	խորությունը (մ)	Կողեզրերի թեքությունը, (0)			
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ջրվեժ գյուղ, Մելքոնյան փող. 2-րդ փակ, 6-րդ փող., 6-րդ փող. 2-րդ նրբ, 6-րդ փող. 2-րդ նրբ. 1-ին փակ.	բնական	500 գծամետր	----	----	----	----	գ. Ջրվեժ	բավարար
2	Զովք 1-ին փողոց	բնական	400 գծամետր	----	----	----	----	գ. Զովք	բավարար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2020 թվականի
մարտի 6-ի N 144-Ա որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ջրվեժ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները) -սելավ -հեղեղում -սողանք -քարաթափում -և այլն	գ. Ջրվեժ - սելավ գ. Զովք - սելավ
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	գ. Ջրվեժ, Մելքոնյան փող. 2-րդ փակ, 6-րդ փող., 6-րդ փող. 2-րդ նրբ., 6-րդ փող. 2-րդ նրբ. 1-ին փակ. գ. Զովք, 1-ին փողոց,
3. Առաջացման հնարավոր պատճառները	գ. Ջրվեժ – հորդառատ անձրևներ, ձնհալ գ. Զովք – հորդառատ անձրևներ, ձնհալ
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	գ. Ջրվեժ- 500 գծամետր երկարություն, 30 տուն, 100 բնակիչ գ. Զովք – 400 գծամետր երկարություն, 12 տուն, 47 բնակիչ
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	գ. Ջրվեժ- Սելավատարի հունի մաքրում գ. Զովք - Սելավատարի հունի մաքրում
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020 թվականին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	1. Փրկարարական ծառայություն՝ 800.000 ՀՀ դրամ 2. Քաղաքացիական ծառայություն՝ 480.000 ՀՀ դրամ 3. Այլ պաշտպանություն՝ 350.000 ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2020 թվականի N 145-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Դավիթ Գեղամի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 8-րդ փողոցի թիվ 7 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան, լողավազանի, տաղավարների և ծածկի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Դավիթ Գեղամի Դավթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2020 թվականի N 146-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Լիլիթ Սերգեյի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 3/2 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մեկ հարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լիլիթ Սերգեյի Անտոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2020 թվականի N 147-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարիա Պետրոսի Պողոսյանի (ծնված՝ 1972 թվականի հունիսի 15-ին) և Հրայր Հայաստանի Կարապետյանի (ծնված՝ 1969 թվականի հունվարի 01-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 16 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 1347456 վկայականը, տրված 2004 թվականի հունիսի 23-ին, «Մելկար»ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի փետրվարի 19-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Մելկար» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի՝ պարզվել է, որ Մարիա Պետրոսի Պողոսյանին և Հրայր Հայաստանի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 16 հասցեի այգեգործական հողակտորում 2007 թվականին ինքնակամ կառուցվել է նկուղ՝73,19 քառ.մետր, 1-ին հարկ՝84,67 քառ.մետր, ձեղնահարկ և բաց պատշգամբներ՝ 83,4 քառ.մետր և պարիսպ՝ 2,8 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մարիա Պետրոսի Պողոսյանին և Հրայր Հայաստանի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 16 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Մարիա Պետրոսի Պողոսյանին և Հրայր Հայաստանի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 16 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված նկուղը՝ 73,19 քառ.մետր, 1-ին հարկը՝ 84,67 քառ.մետր, ձեղնահարկը և բաց պատշգամբները՝ 83,4 քառ.մետր և պարիսպը՝ 2,8 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 631 644 (վեց հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Բաղդասարյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարիա Պետրոսի Պողոսյանին և Հրայր Հայաստանի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մարտի 2020 թվականի N 148-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Հակոբ Թելմանի Հակոբյանին և Թելման Հակոբի Հակոբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տունը երեքհարկանի բնակելի տան վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հակոբ Թելմանի Հակոբյանին և Թելման Հակոբի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մարտի 2020 թվականի N 149-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Նաիրա Լևի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 38-րդ փողոցի թիվ 6/1 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նաիրա Լևի Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մարտի 2020 թվականի N 150-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արփիար Սենիկի Ֆարսյանի (ծնված՝ 1984 թվականի հուլիսի 30-ին) և Տիրուհի Նշանի Տիրանյանի (ծնված՝ 1951 թվականի հունվարի 25-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0319-0010 կադաստրային ծածկագրով 0,4 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի ջրովի վարելահողից հողակտորը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգու փոխադրելու մասին (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրեր և սեփականության իրավունքի վկայագիր, վավերացված 2019 թվականի դեկտեմբերի 24-ին, անհատ ձեռնարկատեր Տիգրան Փոթիկյանի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին սահմանված կարգով չափագրված և հաստատված հողամասի հատակագիծը և 2020 թվականի հունվարի 23-ին տրված եզրակացությունը):

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Արփիար Սենիկի Ֆարսյանին և Տիրուհի Նշանի Տիրանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0319-0010 կադաստրային ծածկագրով 0,4 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահողը, փոխադրել 4-րդ կարգի կորիզավոր այգու:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման առաջին կետում նշված գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքն ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու նկատմամբ և պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արփիար Սենիկի Ֆարսյանին, Տիրուհի Նշանի Տիրանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մարտի 2020 թվականի N 151-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Լուսինե Ռուբիկի Խուրշուդյանի (ծնված՝ 1975 թվականի ապրիլի 7-ին), Նարգիզ Իվանի Թումանյանի (ծնված՝ 1949 թվականի հոկտեմբերի 23-ին), Աննա Վարդանի Թումանյանի (ծնված՝ 1995 թվականի հուլիսի 19-ին) և Նանե Վարդանի Թումանյանի (ծնված՝ 1998 թվականի փետրվարի 11-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել ճանաչել իրենց սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի այգեգործական զանգվածի թիվ 14 հասցեի՝ իրենց կողմից փաստացի օգտագործվող 513,9 քառ.մետր մակերեսով այգեգործական հողակտորի նկատմամբ (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, տրված 2015 թվականի հունիսի 6-ին, անվան փոխման մասին պետական վկայական N ԲԱ176744, տրված 2019 թվականի հոկտեմբերի 15-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի փետրվարի 21-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նարգիզ Իվանի Թումանյանին, Լուսինե Ռուբիկի Խուրշուդյանին, Աննա և Նանե Վարդանի Թումանյաններին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ.***

1.Ճանաչել Նարգիզ Իվանի Թումանյանի, Լուսինե Ռուբիկի Խուրշուդյանի, Աննա և Նանե Վարդանի Թումանյանների սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի այգեգործական զանգվածի թիվ 14 հասցեի այգեգործական հողամասի՝ փաստացի օգտագործվող 0,5139 հեկտար մակերեսով հողակտորի նկատմամբ, որը իրենց կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարգիզ Իվանի Թումանյանին, Լուսինե Ռուբիկի Խուրշուդյանին, Աննա և Նանե Վարդանի Թումանյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. մարտի 13
գ. Ջրվեժ